ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/27

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Բողոք բերող՝ «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Մասնակցությամբ՝

«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Թունյանի, Ա. Աղինյանի,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներ՝ Գ. Ղազարյանի, Գ. Հակոբյանի,

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Բողոքաբեր)

կողմից 05.04.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է Բողոքը բավարարել, պարտավորեցնել «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովին կասեցնել գնահատման նիստը և գնահատման գործընթացը և պարտավորեցնել Հանձնաժողովին անբավարար գնահատել ու մերժել այն մասնակիցների հայտերը, ովքեր Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 15-ի որոշմամբ սահմանված ժամկետում չեն շտկել անհամապատասխանությունները և չեն ներկայացրել հայտի ապահովում, որը կբավարարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 05.04.2021թ.-ին:

06.04.2021թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/27 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

14.04.2021թ.-ի Ընկերության միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 15.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/5697-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

14.04.2021թ.-ին, 22.04.2021թ.-ին և 05.05.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 22.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.05.2021թ.-ին:

2. «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ն 05.04.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով բաց մրցույթի հրավերով հայտ են ներկայացրել երեք ընկերություն՝

- *Սույն բողոքը ներկայացրած <էյ էմ Փի Ջի գրուպ> ՍՊԸ-ն,*
- *Ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով ՕԱՕ <ANY Biztonsagi Nyomada>, ՅԱՕ <Codex Ertekpapirnyomada>-ն և,*
- *<ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ն:*

Սույն բողոքի համար կարևոր նշանակություն ունեն մի շարք փաստական հանգամանքներ.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 25.01.2021 թվականի N 27/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առաջին նիստը տեղի ունեցավ սույն թվականի մարտի 9-ին:

Հանձնաժողովը որոշեց հայտերի ուսումնասիրման նպատակով նիստը կասեցնել և այն վերսկսել 2021 թվականի մարտի 15-ին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի ե/ենթակետի համաձայն՝

<Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ>

Հետևաբար, չնայած որ մարտի 9-ի Հանձնաժողովի նիստի Արձանագրությունում երաշխիքի մասին հիշատակում չկա, ողջամիտ կասկածից վեր է որ՝

- *Հանձնաժողովը արդեն մարտի 9-ին գիտեր, որ մասնակիցներից երկուսի՝ <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ի և Ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով ՕԱՕ <ANY Biztonsagi Nyomada> ներկայացրած հայտի ապահովումը չի բավարարում օրենսդրության պահանջներին, և*
- *Այդ մասնակիցները պետք է հայտի ապահովման բնօրինակը ներկայացնեին մինչև հաջորդ աշխատանքային օրվա 17.00-ն. Անվիճելի փաստ է, որ Կարգի այս պարտադիր պայմանը չի պահպանվել:*

2. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի ունեցավ 2021 թվականի մարտի 15-ին, առավոտյան ժամը 10.00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- *սույն բողոքը ներկայացրած կազմակերպության՝ <էյ էՄ ՓԻ Ջի գրուպ> ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան,*

- *<ANY Biztonsagi Nyomada> կողմից ներկայացված բանկային երաշխիքի գումարը հավասար չէ մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին,*
- *Իսկ <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ն հայտի ապահովում ընդհանրապես չի ներկայացրել:*

Հանձնաժողովը որոշեց որ մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը, այսինքն մարտի 15-ին, համակարգի միջոցով տեղեկացնում է <ANY Biztonsagi Nyomada>-ին և <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նիստը որոշվեց վերսկսել նույն թվականի մարտի 17-ին, ժամը 10.00-ին:

3. 2021 թվականի մարտի 16-ին <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ բննող անձին (այսուհետ՝ Բողոք բննող անձ) բորլոբ ներկայացրեց պահանջելով պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունել գնահատման նիստը կասեցնելու և հայտում անհամապատասխանությունները շտկելու առաջարկ անելու մասին որոշում:

Կարևոր է նշել, և դա ապացուցում է նաև Բողոք բննող անձի 2021 թվականի մարտի 26-ի որոշումն այդ Բողոքով, որ <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ի Բողոքն ակնհայտ անհիմն էր և ուներ միայն գնման գործընթացը կասեցնելու նպատակ, և բողոքը բերած ընկերությունը ողջամտորեն չէր կարող դա չհասկանալ, քանի որ ի սկզբանէ կարծես թե հայտի ապահովումներ կայացնելու մտադրություն չի էլ ունեցել:

Կարևոր է նաև նշել, որ չնայած <Գնումների մասին> ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն Բողոք բննող անձը հայտարարությունը հրապարակում է Բողոքն ստանալու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ դեպքով հայտարարությունը հրապարակվեց հենց նույն օրը՝ մարտի 16-ին, արդեն ոչ աշխատանքային ժամի՝ երեկոյան 18.10 րոպեին:

4. 2021 թվականի մարտի 17-ին ժամը 10.00-ին նիստին, բնականաբար, հիմք ընդունելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի դրույթները, գնումների գործընթացը կասեցվեց: Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվեց Բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման տեղեկագրում հրապարակման հաջորդ օրը:

5. «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ. ներկայացված բողոքի բննության նպատակով հրավիրված նիստը տեղի պետք է տեղի ունենար 23.03.2021թ. ժամը 09:40-ին, ք. Երևան, Մելիք Ադամյան 1 հացեում, 1-ին հարկի դահլիճում:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված Բողոքներ բննող անձի գործունեության կարգի 16-րդ կետի համաձայն Բողոքարկման

ընթացակարգում ներգրավված կողմերի կամ նրանց մի մասի նիստին չներկայանալու հանգամանքը հիմք չէ նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկումը հետաձգելու համար, իսկ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն պատշաճ կարգով տեղեկացված է եղել, մարտի 23-ի նիստը, անհայտ պատճառով հետաձգվեց և տեղի ունեցավ մարտի 26-ին ժամը 9.10 րոպեին:

6. Բողոք բննող անձն իր 26.03.2021 թվականի որոշմամբ մերժեց Բողոքը:

7. Եվս մի կարևոր հանգամանք, <ANY Biztonsagi Nyomada> ընկերության ներկայացրած հայտի ապահովումը ևս չէր բավարարում օրենսդրության պահանջներին. Մենք չունենք հստակ տեղեկատվություն, արդյոք այդ ընկերությունն ի վերջո կատարել է Հանձնաժողովի 15.03.2021 թվականի որոշումը և շտկել է անհամապատասխանությունը ներկայացնելով օրենսդրության համապատասխան երաշխիք, թե ոչ: Մինչդեռ, վերը նկարագրված փաստերի լույսի ներքո, այս հանգամանքը էական նշանակություն ունի սույն բողոքով որոշման կայացման և սույն գնման ամբողջ գործընթացի իրավաչափության համար: Առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն, որը բողոք էր ներկայացրել, հայտի ապահովում այդպես էլ չի ներկայացրել:

Այսինքն, ողջամիտ կասկածից վեր է ու անվիճելի, որ գնման գործընթացը կասեցնելու «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի ջանքերի միակ շահառուն, որքան էլ զարմանալի է, ոչ թե «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն է, այլ հավանաբար <ANY Biztonsagi Nyomada> ընկերությունը:

Մեր կարծիքով, վերը նկարագրված փաստերն անվիճելիորեն հանգեցնում են գնումների մասին օրենսդրության մի շարք կոպիտ խախտումների, որոնց ստորև մանրամասն անդրադառնալու ենք, մասնավորապես՝

Ա. -Հանձնաժողովի 15.03.2021 թվականի նիստի Արձանագրության համաձայն, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը, այսինքն մարտի 15-ին, համակարգի միջոցով տեղեկացնում է <ANY Biztonsagi Nyomada>-ին և <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 41 և 42-րդ կետերի համաձայն՝

<41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև, կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: >...

<42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում (այս կետը որպես ժամկետ նշում է ժամը 17.00-ն) չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:>:

Հետևաբար, հաշվի առնելով այն, որ և <Գնումների մասին> ՀՀ օրենքը և Կարգը, խոսում են <մեկ աշխատանքային օրով կասեցնելու> մասին, աշխատանքային օրը ավարտվում է 18.00-ին, իսկ ըստ Հանձնաժողովի վերը հիշատակված որոշմամբ մասնակիցներին տեղեկացվել է մարտի 15-ին, ապա կասեցման ու շտկման մեկ աշխատանքային օրն ավարտվում է մարտի 16-ին՝ աշխատանքային օրվա ավարտին, այսինքն 18.00-ին:

Մենք պնդում ենք, որ <Գնումեերի մասին> ՀՀ օրենքի և Կարգի համաձայն, 2021 թվականի մարտի 15-ի որոշմամբ սահմանված անհամապատասխանությունների շտկման մեկ աշխատանքային օրվա ավարտից, այսինքն մարտի 16-ի ժամը 18.00 ից հետո, պետք է մերժվի այն մասնակցի կամ մասնակիցների հայտը, որը չի ներկայացրել օրենսդրության պահանջներին համապատասխանող հայտի ապահովում:

Բ. <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ն բողոքը ներկայացրել է 2021 թվականի մարտի 16-ին: <Գնումների մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝

<Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը.>:

Մեր դեպքում, Բողոքը քննող անձը հայտարարությունը տեղադրել է մարտի 16-ին ժամը 18.10 րոպեին, աշխատանքային օրվա ավարտից հետո:

Մենք պնդում ենք, որ՝ Բողոք բերող անձն իրավունք չուներ աշխատանքային օրվա ավարտից հետո հրապարակել հայտարարությունը:

Բացի դրանից, ակնհայտ է, որ բողոքը ներկայացրած <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ն, Հանձնաժողովի մարտի 15-ի որոշմամբ իրեն տրված մեկ աշխատանքային օրվա

ժամկետում անհամապատասխանությունը շտկելու պարտականությունը կատարելու նպատակ նույնիսկ չի ունեցել:

Ընկերությունը չնայած տեղեկացված է եղել այդ մասին, սակայն հայտի ապահովում ներկայացնելու փոխարեն որոշել է <Գնումների մասին> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով ընձեռնված հնարավորությունը ոչ իրավաչափ օգտագործելու միջոցով կասեցնել գնման գործընթացը:

Մենք պնդում ենք նաև, որ Բողոք քննող անձի կողմից հայտարարությունը աշխատանքային օրվա ավարտից հետո հրապարակելու պատճառը ողջամիտ կասկածից վեր է:

Այդպիսի <շտապողականությանը> միայն մի բացատրություն ունի, փորձել ուշադրությունը շեղել այն հանգամանքից, որ մասնակիցները չեն կատարել հայտի ապահովումը ներկայացնելու իրենց պարտավորությունը, և աղավաղելով ու չարաշահելով օրենսդրության կարգավորումները, ոչ իրավաչափորեն կասեցնել գնման գործընթացը:

Ընդ որում, քանի որ <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ն հայտի ապահովում այդպես էլ չի ներկայացրել և նման մտադրություն ի սկզբանե կարծես թե չի ունեցել, մենք ողջամտորեն իրավունք ունենք պնդել, որ <ԻՄՓՈՐԹԷՅՋՆՍԻ> ՍՊԸ-ի և Բողոք բերող անձի գործողությունները, առնվազն անուղղակիորեն, ուղղված են եղել աջակցելու երրորդ մասնակցին՝ <ANY Biztonsagi Nyomada> ընկերությանը, որը հավանաբար ևս այդ պահին՝ մարտի 16-ին, չէր ներկայացրել օրենքով պահանջվող երաշխիքը:

Գ. Ինչպես վերը նկարագրված փաստերից երևում է, Բողոք քննող անձը մարտի 23-ի նիստը, գործնականում առանց ողջամիտ հիմնավորման, հետաձգել է մինչև մարտի 26-ը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետաձգման որևէ հիմնավորում չկա, ինչպես նաև. այն, որ ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի համաձայն բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերի կամ նրանց մի մասի նիստին չներկայանալու հանգամանքը հիմք չէ նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկումը հետաձգելու համար, մենք պնդում ենք, որ Բողոք քննող անձը չարաշահել է իր հայեցողությունը: Արդյոք այդ հետաձգումը չի կատարվել այն պատճառով, որ որմէ մասնակից, օրինակ <ANY Biztonsagi Nyomada> ընկերությունը, մարտի 23-ին դեռ չէր հասցրել ներկայացնել օրենսադրությամբ պահանջվող պատշաճ հայտի ապահովում և կարիք կար ևս մի քանի օր գնման գործընթացը կասեցրած պահելու՞:

Դ. <Գնումների մասին> ՀՀ օրենքի 3-րդ հողվածը սահմանում է գնումների գործընթացի սկզբունքները.

<2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունս:

Մենք պնդում ենք, որ Հանձնաժողովի և Բողոքը քննող անձի կողմից խախտվել են բոլոր այդ սկզբունքները:

Մասնավորապես՝ մեր ընկերությունը ի սկզբանե, ներկայացրել է օրենսդրությամբ պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներառյալ հայտի ապահովումը, որի համար էական ծախսեր է կատարել:

Մինչդեռ մյուս երկու մասնակիցները ոչ միայն չեն ներկայացրել պատշաճ հայտի ապահովում, այլ նաև. չեն կրում դրա համար օրենքով սահմանված որմև բացասական հետևանք՝

- *Նրանց հայտերը դեռ մերժված չեն, քանի որ գնման գործընթացը ոչ իրավաչափորեն կասեցվել է,*
- *Իսկ մեր ընկերությունը, շարունակում է իր օրինապահ վարքագծի արդյունքում տուժել, կրելով հայտի ապահովման՝ երաշխիքի, ծախսերը:*

Մյուս երկու մասնակիցների այդպիսի ոչ իրավաչափ վարքագիծը գործնականում խրախուսվում ու օժանդակվում է Հանձնաժողովի և Բողոքը քննող անձի կողմից:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում գործ ունենք մեր ընկերության նկատմամբ ակնհայտ խտրական, ոչ մրցակցային և ոչ համաչափ վերաբերմունքի և գնման գործընթացի հետ:

Ընդ որում, և այս փաստի կարևորությունը ևս մեկ անգամ ցանկանում ենք ընդգծել, <ANY Biztonsagi Nyomada> ընկերությունը, ով այս ամբողջ ընթացքում <պասսիվություն է> դրսևորում, զարմանալի զուգադիպությունների արդյունքում հանդիսանում է միակ մասնակիցը, ով շահում է այսպիսի գնման գործընթացից:

Այս առումով, մենք պնդում ենք նաև, որ խախտվել է նաև գնման գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը: Մասնավորապես, սույն բողոքի քննության և սույն գնման գործընթացի իրավաչափության գնահատման համար որոշիչ ու էական նշանակություն ունեն առնվազն հետևյալ հանգամանքները՝

- *Երբ և քանի անգամ է <ANY Biztonsagi Nyomada> ընկերությունն տեղեկացել, որ իր ներկայացրած երաշխիքը չի համապատասխանում օրենսդրության պահանջներին, ինչ եղանակով է տեղեկացել և ումից՞,*
- *Ինչպես է արձագանքել <ANY Biztonsagi Nyomada> ընկերությունը այդ տեղեկացումներին, արդյոք ինչ որ պատասխան ներկայացրել է՞*
- *Երբ է ի վերջո <ANY Biztonsagi Nyomada> ընկերությունը ներկայացրել պատշաճ երաշխիք,*
- *Արդյոք Հանձնաժողովը, Պատվիրատուն կամ Բողոք քննող անձը տեղյակ են եղել, որ <ANY Biztonsagi Nyomada> ընկերությունը չի կարողանալու 2021 թվականի մարտի 16-ին մինչև Հանձնաժողովի սահմանած ժամկետի ավարտը ներկայացնել օրենսդրությամբ պահանջվող պատշաճ երաշխիքը:*

Ի լրումն վերոգրյալի, հայտնում ենք նաև, որ մեր ընկերությունը, իր իրավունքների խախտման այսպիսի իրավիճակի պահպանման պարագայում, պատրաստվում է օգտվել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իր իրավունքից, այն է՝ դատական կարգով պահանջելու հատուցել իր կրած վնասներն, այդ թվում բաց թողնված օգուտը, որոնք մենք կրում ենք և վստահաբար կրելու ենք Հանձնաժողովի, Բողոքը քննող անձի և Պատվիրատուի գործողությունների ու անգործությունների արդյունքում:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքաբերը Բողոքներ քննող անձին խնդրել է Բողոքը բավարարել, պարտավորեցնել «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովին կասեցնել գնահատման նիստը և գնահատման գործընթացը և պարտավորեցնել Հանձնաժողովին անբավարար գնահատել ու մերժել այն մասնակիցների հայտերը, ովքեր Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 15-ի որոշմամբ սահմանված ժամկետում չեն շտկել անհամապատասխանությունները և չեն ներկայացրել հայտի ապահովում, որը կբավարարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

14.04.2021թ.-ին ներկայացված լրացմամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «էյ էմ Փի Ջի զրուպ» ՍՊԸ-ի կողմից ս.թ. ապրիլի 5-ին ներկայացված բողոքի հայտնում եմ հետևյալը.

Բողոքում ներկայացված փաստական հանգամանքների վերաբերյալ լրացուցիչ ապացույցներ ձեռքբերելու նպատակով «էյ էմ Փի Ջի զրուպ» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ ՊԵԿ-ին և ՀՀ ֆինանսների նախարարությանը: ՀՀ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն.

- *«ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի հայտում բացակայել է հայտի ապահովման սկանավորված տարբերակը և ՊԵԿ-ի պատասխան գրության օրվա դրությամբ՝ 12.04.2021թ., ընկերությունը որևէ հայտի ապահովում չի ներկայացրել,*
- *ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով ՕԱՕ «ANY Biztonsagi Nyomada», ՅԱՕ «Codex ErtekpapirnyomadaH-ի հայտում առկա է եղել հայտի ապահովման սկանավորված տարբերակը, որի բնօրինակը ներկայացվել է պատվիրատուին 09.03.2021թ., այնուհետև կազմակերպությունը 24.03.2021թ. պատվիրատուին է ներկայացրել հայտի ապահովման բնօրինակի փոփոխված տարբերակը՝ կցելով «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 23.03.2021թ. թիվ 652-2262 գրությունը սկզբնական երաշխիքում նշված գումարի չափը փոփոխելու (ավելացնելու) մասին:*

Գնահատող հանձնաժողովը 09.03.2021թ. նիստի N 5 արձանագրության 4-րդ կետով որոշել է հայտերի ռաումնասիրության նպատակով նիստը կասեցնել և վերսկսել 15.03.2021թ., մինչդեռ Կարգի 40-րդ կետով, որը սահմանում է հայտերի բացման և գնահատման նիստում կատարման ենթակա գործողությունները, հայտերի ուսումնասիրության նպատակով նիստի կասեցման հնարավորություն նախատեսված չէ: Բացման նիստի կասեցման ընթացակարգը նախատեսված է Կարգի 41-րդ կետով, որի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Նշված կետին համապատասխան հանձնաժողովը նիստը կասեցրել է միայն 15.03.2021թ. կայացած նիստի N6 արձանագրության 2-րդ որոշմամբ: Այսինքն հանձնաժողովը հայտերի ուսումնասիրության նպատակով 09.03.2021թ. բացման նիստը կասեցնելու լիազորությամբ օժտված չի եղել:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե. պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում

է երաշխիքի բնօրինակից արտատպված (Սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, իսկ կարգի 42-րդ կետը սահմանում է, որ եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, ...: Տվյալ դեպքում հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը ս.թ. մարտի 10-ն է (հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 09.03.2021թ. ժամը 9:30-ը) և հաշվի առնելով, որ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն այդ ժամկետում պատվիրատուին չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը, հետևաբար վերջինիս հայտը ենթակա է մերժման: Մինչդեռ հանձնաժողովը գործելով ոչ իրավաչափ՝ 15.03.2021թ. ժամը 10:00-ին կայացած նիստի 6-րդ արձանագրության 1-ին կետի 3-րդ ենթակետով արձանագրել է, որ ընկերության հայտում բացակայում է հայտի ապահովումը, իսկ նույն արձանագրության 2-րդ կետով որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել է «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ին այդ ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Ինչ վերաբերում է ՕԱՕ «ANY Biztonsagi Nyomada» Nyrt կազմակերպությանը, ապա հանձնաժողովը 15.03.2021թ. ժամը 10:00-ին կայացած նիստի 6-րդ արձանագրության 1-ին կետի 2-րդ ենթակետով արձանագրել է, որ ներկայացված բանկային երաշխիքի գումարի չափը հավասար չէ մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, իսկ նույն արձանագրության 2-րդ կետով որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել է «ANY Biztonsagi Nyomada» Nyrt կազմակերպությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ սահմանված կանոններով այդ կազմակերպությունում դադարեցվում են համապատասխան գործառնությունները: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն,

իսկ 2-րդ մասի համաձայն՝ եթե այդ գործողությունը պետք է կատարվի որևէ կազմակերպությունում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ մարմնում կամ կազմակերպությունում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները: Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով մասնակիցը պարտավոր էր պատվիրատուին ներկայացնել հայտի ապահովման շտկված/փոփոխված տարբերակի բնօրինակը, հետևաբար այդ գործողությունը կատարելու համար սահմանված մեկ աշխատանքային օրյա ժամկետն ավարտվում էր մարտի 16-ի աշխատանքային ժամի ավարտին՝ ժամը 18:00-ին: Սակայն այդ ժամկետում «ANY Biztonsagi Nyomada» Nyrt կազմակերպությունը հայտի ապահովման բնօրինակը չի ներկայացրել, հետևաբար վերջինիս հայտը նույնպես ենթակա է մերժման: Ավելին, սահմանված ժամկետում կազմակերպությունը չէր էլ կարող ներկայացնել հայտի ապահովումը, քանի որ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի՝ բանկային երաշխիքի սկզբնական գումարի ավելացման մասին ծանուցումը թվագրվել է մարտի 23-ին և միայն մարտի 24-ին է հայտի ապահովման բնօրինակի փոփոխված տարբերակը մասնակցի կողմից ներկայացվել պատվիրատուին, այսինքն 8 օր ուշացումով: Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի 17.03.2021թ. կայացած նիստի N7 արձանագրությամբ նշված՝ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի հիմքով գնման գործընթացի կասեցմանը, ապա այն որևէ նշանակություն և ազդեցություն չի կարող ունենալ, քանի որ բողոքի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է 2021 թվականի մարտի 16-ին, ժամը 18:10-ին, այսինքն հայտի ապահովման բնօրինակը պատվիրատուին ներկայացնելու սահմանված ժամկետի ավարտից՝ 18:00-ից հետո:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է բողոքը բավարարել, պարտավորեցնել «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու 09.03.2021թ. նիստի N5 արձանագրության 4-րդ կետով նիստը կասեցնելու վերաբերյալ որոշումն ուժը կորցրած ճանաչելու, 15.03.2021թ.-ի նիստի N6 արձանագրության 2-րդ կետը «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի մասով ուժը կորցրած ճանաչելու և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի ու ՕԱՕ «ANY Biztonsagi Nyomda», ՅԱՕ «CODEX Ertekpapirnyomda» կազմակերպությունների հայտերը մերժելու մասին որոշումներ:

Մեկ այլ՝ 27.04.2021թ.-ին ներկայացրած լրացմամբ, Ընկերությունը Բողոքներ քննող անձին հայտնել և հավելել է հետևյալը.

«Ի լրումն «էյ էմ Փի Ջի զրուպ» ՍՊԸ-ի կողմից ս.թ. ապրիլի 5-ին ներկայացված բողոքի և ս.թ. ապրիլի 14-ին ներկայացված բողոքի լրացման հայտնում ենք հետևյալը.

«էյ էմ Փի Ջի զրուպ» ՍՊԸ-ի բողոքի քննության 22.04.2021թ. նիստի արդյունքներով ՊԵԿ-ի կողմից ներկայացվել են լրացուցիչ փաստաթղթեր, որոնցից պարզվում է, որ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ որոշման ընդունումից հետո գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ և որոշել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով կրկին ծանուցումներ ուղարկել մյուս երկու մասնակիցներին և դրա համար կրկին տրամադրել ժամանակ: Գտնում ենք, որ Հանձնաժողովը երկրորդ անգամ շտկելու հնարավորություն ընձեռելով կրկին գործել է ոչ իրավաչափ, քանի որ այդպիսի ընթացակարգ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված չէ և պատվիրատուն օժտված չէ նման լիազորությամբ: Օրենքի 51-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ բողոքի վերաբերյալ հայտարարության հրապարակման հիման վրա գնման գործընթացը կասեցվում է. այլ ոչ թե ընդհատվում: Հետևաբար կասեցման համար հիմք ծառայած հանգամանքը դադարելու օրվանից պետք է շարունակվեր ժամկետի ընթացքը, այլ ոչ թե սահմանվեր նոր ժամկետ:

Կրկին անդրադառնալով ժամկետների հաշվարկմանը անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (օրենսգիրք) 330-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Նույնպիսի դրույթ նախատեսված է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով: Սակայն առանձնահատուկ ուշադրության ենթակա է օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, գործարքով սահմանված կամ դատարանի նշանակած ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով: «Գնումների մասին» ՀՀ օրենքը սահմանել է ժամկետների և ժամանակահատվածի հաշվարկման երկու առանձին համակարգ՝ օրացուցային օր (հոդվածներ 5.1, 10, 20, 21 և այլն) և աշխատանքային օր (հոդվածներ 9, 10, 11, 15, 22 և այլն): Ժամկետների և ժամանակահատվածի հաշվարկման երկու առանձին համակարգ՝ օրացուցային օր (կարգի 21, 23, 33 կետեր և այլն) և աշխատանքային օր (կարգի 18, 20, 21, 25 կետեր և այլն) սահմանվել են նաև Կարգով: Միևնույն ժամանակ օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ եթե գործողությունը պետք է կատարվի կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ սահմանված կանոններով այդ կազմակերպությունում դադարեցվում են համապատասխան գործառնությունները: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես սահմանում է, որ եթե գործողությունը պետք է

կատարվի որևէ կազմակերպությունում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ մարմնում կամ կազմակերպությունում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները: Տվյալ դեպքում ՊԵԿ-ի կողմից տրամադրված գործում առկա փաստաթղթերից պարզ է դառնում, որ գնահատող հանձնաժողովը Կարգին համապատասխան 15.03.2021թ. կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցման մեջ հստակ սահմանվել են թե՝ ժամկետը՝ այն է մեկ աշխատանքային օր, և թե՝ կատարման ենթակա գործողությունները՝ հայտի ապահովումը ուղարկել գնումների համակարգողի էլեկտրոնային փոստին և դրա բնօրինակը ներկայացնել գնահատող հանձնաժողովին: Ակնհայտ է, որ փաստաթղթի բնօրինակը հնարավոր է ներկայացնել պատվիրատուին բացառապես աշխատանքային ժամին: Հետևաբար 16.03.2021թ. ժամը 18:00-ին դրանք ներկայացնելու ժամկետը այլևս սպառվել է և մասնակիցները սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը՝ հայտի ապահովումները, չեն ներկայացրել պատվիրատուին և վերջիններիս հայտերը ենթակա են մերժման: Հատկանշական է, որ ՀՀ կառավարությունն իր 24.11.2005թ. N 2138-Ն որոշման 1-ին կետով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատաժամանակի սկիզբը սահմանել է ժամը 9.00-ն, իսկ ավարտը՝ 18-00-ն: Աշխատանքային օրով հաշվարկվող ժամկետի ցանկացած նույնացումը օրացուցային օրով հաշվարկվող ժամկետի հետ ձևափոխում և նենգափոխում է ժամկետների հաշվարկման ողջ համակարգը նաև այն պատճառով, որ ստացվում է օրենսգրքի 330- րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթներն անիմաստ են, քանի որ ցանկացած դեպքում որևէ ժամին սահմանված կանոններով համապատասխան գործառնությունները դադարեցվելուց հետո այսպես թե այնպես դեռ պետք է ավարտվի նաև այդ օրացուցային օրը:»:

Ելնելով վերագրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է նաև պարտավորեցնել «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու 05.04.2021թ.-ի թիվ 9 արձանագրությամբ հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն տալու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 06.04.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/5133-2021 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից 05.04.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր կերպով հայտնելով իր դիրքորոշումը ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքների վերաբերյալ:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Ընկերության 14.04.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 15.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/5697-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով Հանձնաժողովի կողմից կազմված արձանագրություններին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

Ծառայությունը, ի պատասխան ներկայացված բողոքի 27.04.2021թ.-ի լրացման, 04.05.2021թ.-ին թիվ Ե/497-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021 թվականի ապրիլի 30-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6680-2021 գրության՝ «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի բողոքի լրացման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով գնման գործընթացներին մասնակցած կազմակերպություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան ներկայացրած հայտերը շտկելու հնարավորություն է ընձեռնված:

Նշված ժամանակահատվածում շտկման հնարավորությունը չօգտագործելու դեպքում տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում գնահատող հանձնաժողովի 15.03.2021թ. թիվ 6 արձանագրությամբ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ին և ANY Security Printing Company PLC-ին հնարավորություն է տրվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու վերջիններիս հայտերում առկա անհամապատասխանությունները:

«ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի և դրա արդյունքում ընթացակարգի կասեցման վերաբերյալ հայտարարությունը գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված է 16.03.2021թ. ժամը 18:10-ին և ըստ էության Ընթացակարգի կասեցման մեկնարկը համարվում է 17.03.2021թ. ժամը 09:00-ը: Ուստի շտկման համար նախատեսված ժամանակահատվածում գնման ընթացակարգի կասեցում չի արձանագրվել՝ քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Վերոգրյալ հանգամանքներով պայմանավորված՝ հայտնում ենք, որ վերոնշված իրավակարգավորումների համաձայն շտկման ենթակա հայտերի հասցեատերերը պետք է սահմանված ժամկետում՝ մինչև 16.03.2021թ. ժամը 18:00-ը ներկայացնեին շտկման ենթակա փաստաթղթերը, հետևաբար՝ «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ի և ANY Security Printing Company PLC-ի հայտերը ենթակա էին մերժման, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կրկնակի շտկման հնարավորության ընձեռնման պահանջ և/կամ հնարավորություն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2021/27 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով

25.01.2021թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ), որը խմբավորված է 3 (երեք) չափաբաժիններում:

ii. Գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքի գինը (նախահաշվային գին) 1-ին չափաբաժնի համար սահմանվել է 449 280 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 1 980 000 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 2 835 000 000 ՀՀ դրամ գումար:

iii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ն, «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ն և «ANY Security Printing Company PLC» ընկերությունը («ANY Biztonsagi Nyomda» Nyrt):

iv. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.03.2021թ.-ի կայացրած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը կասեցնել և այն վերսկսել 2021 թվականի մարտի 15-ին ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ. Խորենացու-3, 7 հասցեում:

v. Հանձնաժողովի 15.03.2021թ.-ի թիվ 6 արձանագրության համաձայն՝

1. «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

2. «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն որպես հայտի ապահովում ներկայացրած բանկային երաշխիքի գումարի չափը հավասար չէ մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին (բանկային երաշխիքում նշված է 180316.3 Եվրո, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 Եվրոյի փոխարժեքը կազմել է 626,82 ՀՀ դրամ):

3. «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն բացակայում է հայտի ապահովումը:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ANY

Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.03.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում, որում մասնավորապես նշվել է, որ ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկել անհամապատասխանությունը և ծանուցմամբ նշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով և դրա բնօրինակը ներկայացնել գնահատող հանձնաժողովին: Միաժամանակ հիշեցրել է, որ համաձայն «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման հրավերի 8.10 կետի՝ եթե մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

viii. «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացվել բողոք, որը ընդունվել է վարույթ և նույն օրը ժամը՝ 18:10-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

ix. Հանձնաժողովի 17.03.2021թ.-ի թիվ 7 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Ս. Մանգասարյանը տեղեկացրել է, որ «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի բողոքի ներկայացման հիման վրա ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հայտարարության և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցրել է գնման գործընթացը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման հաջորդող աշխատանքային օրը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու-3,7 հասցեում:

xi. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.03.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/15 ծածկագրով որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքը մերժվել է:

xii. Որոշումը հրապարակվել է www.gnumner.am կայքում 30.03.2021թ.-ին:

xiii. Հանձնաժողովի 31.03.2021թ.-ի թիվ 8 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/15 ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը, վերսկսել է «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հետագա ընթացքը: Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Մանգասարյանը հայտնել է, որ հանձնաժողովը 15.03.2021թ. թիվ 6 որոշմամբ՝ «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի հիմքով, մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացրել «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները, սակայն «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի 16.03.2021թ.-ի բողոքի հիման վրա «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցվել է:

xiv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ անհամապատասխանությունների շտկման փուլում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կայացրել է որոշում գնման ընթացակարգը կասեցնելու վերաբերյալ, որը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում 16.03.2021թ. ժամը 18:10-ին, գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգի հետագա ընթացքի վերաբերյալ որոշել է պարզաբանման նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը, և խնդրել հայտնել, թե արդյոք նորից հնարավորություն պետք է տրվի «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին շտկելու հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները:

xv. Հանձնաժողովի 05.04.2021թ.-ի թիվ 9 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Մանգասարյանը տեղեկացրել է, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգի հետագա ընթացքի վերաբերյալ պարզաբանման նպատակով դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարությանը, պարզելու համար, թե արդյոք նորից հնարավորություն պետք է տրվի «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին՝ շտկելու հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.04.2021թ. ստացվել պատասխան թիվ-01.1/26-1/4879-2021 գրությունը, որով ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հայտերի գանահատման լիազորությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

xvi. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը քննարկման արդյունքում որոշել է հնարավորություն տալ «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին՝ շտկելու հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները:

xvii. «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

xviii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 05.04.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում, որում մասնավորապես նշվել է, որ ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկել անհամապատասխանությունը և ծանուցմամբ նշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով և դրա բնօրինակը ներկայացնել գնահատող հանձնաժողովին: Միաժամանակ հիշեցրել է, որ համաձայն «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման հրավերի 8.10 կետի՝ եթե մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

xix. «ANY Security Printing Company PLC» ընկերությունը («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտի ապահովման «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին տրված թիվ 652-2262 շտկված տարբերակը ուղեկցական գրությամբ Հանձնաժողովին է ներկայացրել 24.03.2021թ.-ին:

xx. «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովում Հանձնաժողովին ընդհանրապես չի ներկայացվել:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից 05.04.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.01.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխա-

նությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է

մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:...:

Նույն կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Հրավերի 7.2 կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Վերոնշյալ նորմերի լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը հայտի ապահովում ներկայացնում է հրավերով սահմանված պահանջի դեպքում, այն է՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Որպես բացառություն Կարգով սահմանվել են դեպքեր, երբ հայտի ապահովում չի ներկայացվում, դրանք են այն դեպքերը, երբ գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ինչպես նաև՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, երբ գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն

ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը (10 մլն. ՀՀ դրամը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.01.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքի գինը (նախահաշվային գին) 1-ին չափաբաժնի համար սահմանվել է 449 280 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 1 980 000 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 2 835 000 000 ՀՀ դրամ գումար: Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ANY Security Printing Company PLC» ընկերության («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում որպես հայտի ապահովում ներկայացրած բանկային երաշխիքի գումարի չափը հավասար չէ մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին (բանկային երաշխիքում նշված է 180 316.3 Եվրո, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 Եվրոյի փոխարժեքը կազմել է 626,82 ՀՀ դրամ), իսկ «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտին կից բացակայում է հայտի ապահովումը: Գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.03.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում, որում մասնավորապես նշվել է, որ ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկել անհամապատասխանությունը և ծանուցմամբ նշված փաստաթուղթն ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով և դրա բնօրինակը ներկայացնել գնահատող հանձնաժողովին: Միաժամանակ հիշեցրել է, որ համաձայն «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման հրավերի 8.10 կետի՝ եթե մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի և «ANY Security Printing Company PLC» ընկերության («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) կողմից 16.03.2021թ.-ի դրությամբ հայտի ապահովման շտկված տարբերակը Հանձնաժողովին չի ներկայացվել, իսկ «ANY Security Printing Company PLC» ընկերությունը («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով

ընթացակարգի շրջանակներում հայտի ապահովման «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին տրված թիվ 652-2262 շտկված տարբերակն ուղեկցական գրությամբ Հանձնաժողովին է ներկայացրել 24.03.2021թ.-ին:

Հանձնաժողովի 05.04.2021թ.-ի թիվ 9 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է հնարավորություն տալ «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին՝ շտկելու հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները և որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Հանձնաժողովի քարտուղարի կողմից 05.04.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին ուղարկվել է նույնաբովանդակ ծանուցում:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով կողմերի ներկայացրած դիրքորոշումների հանգամանքներին, ուսումնասիրելով գործով ձեռքբերված և հաստատված փաստերը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն դեպքում, գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք երեք չափաբաժինների համար սահմանված աշխատանքի գինը (նախահաշվային գին) գերազանցել է 10 մլն. ՀՀ դրամը, իսկ հրավերով սահմանվել է, որ մասնակիցները ներկայացնում են հայտի ապահովում, ուստի «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի և «ANY Security Printing Company PLC» ՍՊԸ-ի կողմից հայտով պետք է ներկայացվեր հայտի ապահովում՝ հրավերով սահմանված բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.01.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտեր ներկայացրած «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտին կից հայտի ապահովում չի ներկայացվել, այն չի ներկայացվել նաև Հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.03.2021թ.-ին ուղարկված ծանուցման հիման վրա, իսկ «ANY Security Printing Company PLC» ընկերությունը («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտի ապահովման թիվ 652-2262 շտկված տարբերակը Հանձնաժողովին է ներկայացվել 24.03.2021թ.-ին՝ 16.03.2021թ.-ի փոխարեն: Ընդ որում, այն տրամադրվել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ «ANY Security Printing Company PLC» ընկերությունը («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) հայտի ապահովման շտկված տարբերակը պետք է Հանձնաժողովին ներկայացներ 15.03.2021թ.-ին շտկման մասին ծանուցումը ստանալուց հետո հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում՝ 16.03.2021թ.-ին, սակայն ներկայացրել է 24.03.2021թ.-ին, որպիսի պայմաններում վերջինիս հայտն ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի դրույթները, համաձայն որոնց՝ հայտն ենթակա է անբավարար գնահատման և մերժման, եթե մասնակիցը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունը:

Հատկանշական է նաև այն փաստը, որը Հանձնաժողովը մասնակիցներին 05.04.2021թ.-ին կրկին ծանուցելով, ինքն է ընդունում և հավաստում, որ վերջիններիս կողմից այդ օրվա դրությամբ արձանագրված անհամապատասխանությունները Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված ժամկետում, այն է՝ շտկման մասին ծանուցումը ստանալուց հետո հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում, շտկված չեն եղել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված և ապա www.gnumner.am կայքում նույն օրը հրապարակված բողոքի ներկայացման հիմքով գնման ընթացակարգի կասեցման հանգամանքը, չէր կարող «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի և «ANY Security Printing Company PLC» ընկերության («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) կողմից համապատասխանաբար հայտի ապահովման և դրա շտկված տարբերակը, շտկման համար սահմանված ժամկետում, չներկայացնելու հիմք հանդիսանալ, քանի որ Հանձնաժողովի քարտուղարի կողմից ընկերություններին 15.03.2021թ.-ին ուղարկված ծանուցմամբ, վերջիններս պարտավոր էին համապատասխանաբար հայտի ապահովման և դրա շտկման օրինակներն ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով և դրանց բնօրինակները ներկայացնել գնահատող հանձնաժողովին:

Ընդ որում, պետք է փաստել, որ նախ՝ «ANY Security Printing Company PLC» ընկերությունը («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) օբյեկտիվորեն չէր կարող իմանալ բողոքի ներկայացման և նույն օրը վարույթ ընդունվելու (տեղեկագրում հայտարարության հրապարակման) մասին, ուստի հայտի ապահովման շտկված տարբերակը պետք է Հանձնաժողովին ներկայացվեր մինչև շտկման համար սահմանված ժամկետի ավարտը՝ 16.03.2021թ.-ը, հատկապես երբ՝ բողոքի ներկայացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում 16.03.2021թ.-ին ժամը 18:10-ին: Երկրորդ՝ «Իմփորթ Էյջնսի»

ՍՊԸ-ն, բողոք ներկայացնելով, չէր կարող կանխատեսել, որ 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում կհրապարակվի, ըստ այդմ՝ ընթացակարգը կկասեցվի, նույն օրը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասը:

Հարկ է նկատել նաև, որ «ANY Security Printing Company PLC» ընկերության («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) կողմից ներկայացված 23.03.2021թ.-ին թվագրված բանկային երաշխիքի շտկված տարբերակն ինքնին վկայում է այն մասին, որ ընկերությունը, անկախ բողոքի ներկայացման փաստից, սահմանված ժամկետում չէր ներկայացնելու անհրաժեշտ փաստաթուղթը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ թիվ «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 05.04.2021թ.-ի թիվ 9 արձանագրությամբ «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին և «ANY Security Printing Company PLC» ընկերությանը («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) կրկին անգամ շտկում առաջարկելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ, չի ելնում Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթներից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով շտկման առաջարկի կրկնակիության անթույլատրելիությամբ պայմանավորված, իսկ ներկայացված բողոքը՝ «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի և «ANY Security Printing Company PLC» ընկերության («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) հայտերը մերժելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին, հիմնավոր է և ենթակա բավարարման, սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների հիման վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից 05.04.2021թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/27 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի և «ANY Security Printing Company PLC» («ANY Biztonsagi Nyomda» Nyrt) ընկերության հայտերը մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**